ՊԷՏՏՈՆԼԷԿԷՆԹ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ Տ. ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶԱՅԱՆԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ, ՍՊԱՍԱՒՈՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԷՐ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ* ՈՐ Ի ՍԻՏՆԻ, ՅԱՒՍՏՐԱԼԻԱ

Մեզի համար հոգեկան ուրախութիւն եղաւ Ձեզ տեսնել մի անգամ ևս ի Սիտնի, յԱւստրալիա, Մեր հովուապետական անդրանիկ այցելութեան առիթով (14–24 Փետրուար 1997):

Մենք տարիներ առաջ Ձեզ ճանչցած ենք և անձամբ վկայ եղած Ձեր տարած քահանայագործական աշխատանքներուն ի հոգևոր վայելումն Աւստրալիոյ մեր սիրեցեալ և հաւատացեալ ժողովրդեան: Ծուրջ քառասուն տարիներ Դուք անխոնջ ջանքերով և հետևողական շարունակականութեամբ Ձեր սպասը ընծայեցիք մանաւանդ նոր կազմաւորուող Աւստրալահայ գաղութին անոնց տեղաւորման և կեանքի վերականգնման այնքան կարևոր շրջանին:

Այժմ երբ յառաջացեալ տարիքի բերումով հանգստեան էք կոչուած, Ձեր քահանայական ձեռնադրութեան 50-ամեակին առիթով, Մենք որպէս գնահատութիւն Ձեր բազում տարիներու յոգնաջան վաստակին, և ընդառաջելով Աւստրալիոյ և Նոր Զեղանտայի Հայոց Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Աղան Արքեպ. Պալիոզեանի և Թեմական Խորհուրդին խնդրանքին, Ձեզի կը շնորհենք սոյն Հայրապետական ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿԸ որպէս բարոյական վարձատրութիւն Ձեր երկարամեայ և օգտաշատ քահանայական գործունէութեան:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, Ձեր երեցկնոջ և զաւակներուն շնորհէ երջանկալից երկար կեանք ի խնամս մարդասիրութեան իւրոյ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 8 Ապրիլի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՋ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 83 :